Հրահանգներ տնային պայմաններում բուժվող հիվանդներին

Առողջական վիճակի վերահսկում

- Չափել մարմնի ջերմաստճանը օրական երկու անգամ ։
- Ընդհանուր ինքնազգացողության վատթարացման դեպքում զանգահարել ընտանեկան բժշկին կամ ՍԱՄՅՈՒ-Կենտրոն 15, եթե բժիշկն անհասանելի է։

Ինքնամեկուսացում

- Հարկ է ինքնամեկուսանալ այդ նպատակով վերապահված և լավ օդափոխված սենյակում։ Ինքնամեկուսացումը նպատակ ունի նվազագույնի հասցնել անձանց միջև շփումները և սահմանափակել բնակարանի արտաքին մակերեսների վարակումը։ Սենյակը, ինչպես նաև մյուս հատվածները պետք է օդափոխել օրական երեք անգամ։ Եթե կա մի քանի զուգարան, դրանցից մեկը պետք է հատկացնել Ձեզ։ Ընդհանուր զուգարանից օգտվելու դեպքում խստորեն պահպանել հիգիենայի կանոնները (մաքրել ժավելաջրով և ախտահանիչ անձեռոցիկներով)։
- Պահպանել անվտանգության հեռավորություն։
- Պահպանել 2մ հեռավորություն առանց սերտ շփումների։ Խուսափել ցանկացած շփումներից խոցելի անձանց հետ (հղի կանայք, խրոնիկ հիվանդներ, տարեց անձինք) ։

Ձեռքերի լվացում

- Մանրակրկիտ ձևով ախտահանել ձեռքերը ախտահանիչ հեղուկով (հատկապես ձեռքերով դեմքին դիպչելուց առաջ) և օճառով լվանալ օրական չորսից վեց անգամ 24 ժամվա ընթացքում։

Շփման արտաքին մակերեսներ

- Որոշ արտաքին մակերեսներ կարող են վարակի փոխանցման վեկտոր հանդիսանալ, ուստի պետք է պարբերաբար ախտահանվեն (բջջային հեռախոս, դռների բռնակներ և այլն)։

Խորհուրդներ սպիտակեղենի և անկողնային պարագաների համար

- Հնարավորության դեպքում, հիվանդը անձամբ պետք է իրականցնի այս գործողությունները։
- Թափ չտալ սպիտակեղենը և անկողնային պարագաները։
- Սպիտակեղենը լվանալիս այն տանել մինչև լվացքի մեքենա, առանց բնակարանում որևիցե այլ տեղ թողնելու ։
- Հաստատված վարակով հիվանդի սպիտակեղենը լվացքի մեքենայում լվանալ 60C° ջերմաստիճանում, առնվազն 30 րոպե։

Հատակի լվացում

☐ Պահպանել հատակի և արտաքին մակերեսների բիոմաքրման հետևյալ կանոնները

- Հատակը մաքրելու համար չօգտագործել փոշեկուլ, որն աէրոզոլի տեսքով մասնիկներ է տարածում
- Հատակը և արտաքին մակերեսները լվանալ միանգամյա օգտագործման հատակմաքրիչ գլխիկով և լվացող նյութով
- Երկրորդ անգամ հատակը սրբել նոր, միանգամյա օգտագործման հատակմաքրիչ գլխիկով և ծորակի մաքուր ջրով
- Թողնել, որ չորանա
- Այնուհետև ախտահանել հատակը և արտաքին մակերեսները 0,5% ակտիվ քլոր պարունակող ժավելաջրով (1լ 2,6 % ժավել+ 4լ ջուր)